

առաջարկում է Գովէնին, որ նա թողնէ պաշարւածներին ալատ և անփնաս անց կենալ նրանց միջից և ստանալ իւրև վարձատրութիւն երեք երեխաներին, հակառակ դէպքում կրակ կը տալ բերդը և բոլորն էլ կը ոչնչանան երեխաների հետ միասին, որոնց մեղքը պաշարողներին վրէժն կը լինի Պաշարողները չը համաձայնեցին, Պաշարւածների զրութիւնը շատ նեղ էր, նրանցից երկուսը արդէն սպանւած էին, Մի լանկարծակի դէպք աղատեց նրանց բերդից, մարկիզի հաւատարիմ մարդկանցից մէկը բերդի գաղտնի ճանապարհով մտաւ ներս և խորհուրդ տւեց փրկւել ալդ ճանապարհով, որը տանում էր անտառը, Բերդը կրակ տալով՝ բոլորը դուրս եկան գնացին, երեխաներին թողնելով մի փակած սենեակում, որի բանալին Լանտենակի մօտ էր, Երեխաների մալը հասաւ Տուրդ, տեսաւ որ բերդը կրակ է տւած և որ երեխաները պատուհանից գլուխները հանել են, նա լալիս,

աղաչում պաղատում է, որ աղատեն իւր երեխաներին, բայց ոչնչով չի կարողանում աղատել, որովհետեւ սենեակի երկաթէ դուռը փակւած է, Ալդ ժամանակ, երբ բոլորը խնայատւած են և սենեակը արդէն ալուում է, միենոյն գաղտնի ճանապարհով վերադառնում է Լանտենակը, բանալիով բացում է դուռը և աղատում է երեխաներին, իսկ ինքը ընկնում է թշնամիների ձեռքը, նրան դատապարտում են մահւան, Գովէնը շատ զգացւած լինելով Լանտենակի ազնիւ քաջագործութիւնից, գիշերով աղատում է նրան, ինքը նորա տեղ փակւում բանտումը, Գովէնին գլխատում են.

Ինքն ըստ ինքեան շատ հետաքրքիր պատմութիւն է ալ գրւածքը. բայց որովհետեւ մի քանի կարևոր տեղեր չեն լուսաբանւած, ալդ պատճառով նա կը մնալ ժողովրդից չը հասկացւած:

Թարգմանութիւնը լաւ է:

Գ. Ս.

ՏՈՒՐԳԵՆԵՒԻ, ՍԵՐԳԵՅ ԻԻՍՆՈՎԻՉ.— «Նախընթաց օրը» (Накануне),
Թարգմ. Եր. Ղազարեանի. «Տարագ» 1891 23—27:

Մեզնում առհասարակ կարծում են թէ Թարգմանելուց հետո բան չկալ. բաւական է, որ մարդ փոքր ի շատ է հասկանալ կարողացածը և իմանալ գծագրել իւր մալքնի լեզու տառերը, նա Թարգմանիչ է ու Թարգմանիչ, Թարգմանողից ոչ լուրջ հմտութիւն է պահանջւում, ոչ ընդունակութիւն:

Ալդ սխալը շատ ցաւալի հետեանքներ է ունենում, Ալքի անցրէք մեր Թարգմանական գրականութիւնը և ապշած կը մնաք ամեն քալլափոխում պատահող սխալներից, ճաշակի, գիտութեան, ընդունակութեան և ամենատարրական բարեխղճութեան բացակայութիւնից, Ոչ մի լարգանք դէպի հեղինակը, ոչ մի լարգանք

դէպի ընթերցողները:

Մասնաւորելով խօսքս պ. Լր. «Լաղարեանի թարգմանութեան մասին, պէտք է ամենից առաջ նկատեմ, որ ամեն գովասանքի արժանի է վէպի ընտրութիւնը, և հալ ընթերցողներից շատերը, որոնք չեն կարող բնագիրը կարդալ, սրտանց շնորհակալ կը լինեն թարգմանից, որ հնարաւորութիւն է տալիս նրանց ծանօթանալ տաղանդաւոր վիպասանի գաղափարական (идейный) զրւածքի հետ:

Դժբախտաբար, նոյնը չի կարելի ասել թարգմանութեան մասին: Որքան չափող է ընտրութիւնը, ալնքան անչափող է կատարած թարգմանութիւնը: Իսկ Տուրգենևի զրւածքները արժէր լաւ թարգմանել: Շատ քչերը ուսաց գրականութեան մէջ կարող են մրցել Տուրգենևի հետ գրածքի գեղարեստական արժանաւորութիւններով, ոճի աննման գեղեցկութեամբ: Երբ որ մարդ ուսերէն կարդում է Տուրգենևի վէպերը, ալնպիսի տպաւորութիւն է ստանում ինչպէս ամենաներդաշնակ երաժշտութիւնից, — զուր չէ, որ յուս մատենախօսները նրա տաղանդը «երաժշտական տաղանդ» են անանել: Ամենացաւալին ալն է, որ թարգմանիչը իւր համար պարտականութիւն չի համարել Տուրգենևի վէպը թարգմանելու ժամանակ հետեւել ալն ընդունւած կանոնին, որ թարգմանիչը պէտք է ասիալն բոլորը և միալն ալն, ինչ որ հեղինակն է ասում: Անցնենք փաստերին:

Այսինքն ալնպիսի սխալներից,

որոնք լառաջացել են նրանից, որ թարգմանիչը լաւ չը գիտէ ուսերէն և ալն պատճառով չի հասկացել բնագիրը:

...Имѣе-же было оброчное...

...Մանաւանգ որ հողը կապաւով էր տրւած...

Սխալը թարգմանիչն արել է, երբի, նրանից որ ուսաց կհանքի հետ լաւ ծանօթ չէ, ալնպէս կիմանար, որ оброчное անանում էին Ռուսաստանում ալն կալածները, որոնց տէրերը իրանց զիւղացիներից ալնխատանքի տեղ ստանում էին որոշեալ տուրքեր բնութեան արդիւնքներով:

„Павелъ не чувствовалъ никакого расположенія въ медицинѣ, но, по существовавшему въ то время штату студентовъ, ни въ какой факультетъ поступить было невозможно.

Նա ոչ մի հակումն չէր զգում դէպի բժշկականութիւնը, բայց ալն ժամանակաւ ուսանողական կանոնագրութեան համաձայն՝ ուրիշ բաժին մտնել չէր կարելի...

«Տարազ» № 25, երես 370:

Ալնպիսի կանոնադրութիւն, որ ստիպէր բոլոր համալսարան մտնողներին ընտրել միալն մի բաժին, երբէք չի եղել: Հեղինակի ասածի միտքն ալն է, որ ալն ժամանակ ամեն բաժին ընդունում էին որոշեալ թուով ուսանողներ և Շուքրինը բժշկական մասն է ստիպւած եղել մտնել երկի ալն պատճառով, որ ալն ժամանակ, երբ որ նա խնդիրք է տւել համալսարան մտնելու, ալն բաժնումն է

միայն ազատ տեղ եղել՝ թարգմանիչը չի հասկացել *штаты* խօսքը։ Թարգմանել է կանոնագրութիւն և դուրս է եկել անմիտ բան։

«...Свободный художникъ...»

...Ազատասէր արւեստագէտ...

Պ. Ղազարեանը չի իմանում, որ *свободный художникъ* մի կոչումն է, որ ստանում են կոնսերվատորիաները, գեղարւեստական ճեմարանները և ալլն աւարտողներից մի քանիսը, ինչպէս համալսարանն աւարտողներից մի քանիսը ստանում են կան դիդատ-ի աստիճան։ Ազատ արւեստագէտը ինչպէս և ազատ ունկնդիրը կարող են և պահանջական լինել։

„Дѣвушка посмотрѣлась въ него...”

Աղջիկը մտեցաւ (!) նրան, տնտղեց (!!)

(№ 27. երես 400)։

...Она чуть не умерла отъ злокачественной лихорадки.

...Նա քիչ մնաց, որ մեռնէր չարաբաստիկ տենդից։

(№ 27. երես 403)։

Իժուար է ասել՝ ինչից է լաւաջացել սխալը, հալերէնը լաւ չիմանալուց թէ ուսերէնը։

Այս բոլորը կոպիտ սխալներ են, կան ուրիշ, ի դէպ ասել անթիւ, սխալներ էլ, որոնց մեծ մասից կարող էր ազատ լինել թարգմանութիւնը, եթէ թարգմանիչը մի քիչ աւելի ուշադրութեամբ վերաբերւէր իւր գործին։

Ամեն լեզու ունի իւր նրբութիւնները։ Ամեն լեզուում մի քանի զանազան բառեր միեւնոյն մտքի առան-

ձին, ալսպէս ասենք, գունաւորութիւններն (*оттѣнокъ*) են արտապատում և միեւնոյն բառերը զանազան տեղերում տարբեր իմաստ են ստանում։ Պր. Ղազարեանը այդ մասամբ չի հասկանում, իսկ աւելի լաճախ՝ չի ուզում հասկանալ, Ենթադրեմք թէ մի ուսերէն բառ զանազան տեղերում հալերէն չորս տարբեր բառերով է թարգմանւում,— պ. Ղազարեանը թարգմանութեան մէջ դնում է այդ բառերից մէկը, որ պատահաբար գրչի ծալրն է գալիս։ Աղղալիս անհոգ, չփերթ (*безалаберный*) վերաբերութիւն դէպի բառերը գժուար է երկակայել։ Ահա օրինակներ.

„Сладкій запахъ съ каждымъ дыханіемъ втѣснялся въ самую глубь груди, но грудь имъ охотно дышетъ”.

Անուշահոտութիւնը լցւում, ծանրանում էր կուրծքի մէջ և գգւում էր շնչառութիւնը։

(№ 23, երես 338)։

Պարզ է, որ ալստեղ ծանրանում էր բառը գործ է ածւած շմարանա (аря)։

Посмотрѣлъ на настоящихъ, на стариковъ, на антики, да разбилъ свою чепуху.

Ես տեսալ իսկական, ծերունի, հին փշտակները և ջարդ ու փշուր արի իմ անհեթեթ գործը։

Ծերունիներ (ոչ թէ «ծերունի փշտակներ»)՝ ասելով Շուբինը հակառակ է հին դարերի կլասիկ արւեստագէտներին։

Իսկ դեռ ալս բոլորը ոչինչ։ պ. Ղազարեանը իւր թարգմանական աղատասիրութիւնը աւելի հեռուն է

տանում: Վէպի հոգեբանական մասը նրա համար կոպէկ չարժի: Հեղինակը, դիցուք, ասում է. վէպում գործող այս ինչ մարդը այս ինչ խօսքերը լսելով բարկացաւ, Ղազարեանը թարգմանում է թէ՛ լուզեց. հեղինակն ասում է. նա պատասխանեց, դիցուք, ասումները կրճատեցնելով: Ղազարեանը նրան ստիպում է պատասխանել քթի տակին փնփնթացնելով: Ահա անթիւ օրինակներից մի քանիսը:

Шубинъ произнесъ всю эту рѣчь въ носѣ, полу-лѣниво, полушутливо.

Այս բոլոր ճառը Շուբինը արտասանեց քթի աակ՝ կիսալոգ-նած և կիսածածաղ կերպով... (№ 23 եր. 386).

Ի գէպ նկատեմք, չի կարելի ասել՝ բոլոր ճառը, պէտք է ասել ամբողջ ճառը:

Воскликнулъ на распѣвѣ Шубинъ...

Դոչեց Շուբինը բարձրաձայն... (№ 23 եր. 338).

Съ жалобною гримасой...

Ցաւակցական ծամածռութեամբ:

Улыбнулась томно и вяло...

Ակամա՛ խուլ կերպով սկսեց ժպտալ:

Նոյնը պէտք է նկատել և ալն տեղերի թարգմանութեան մասին, որտեղ հեղինակը նկարագրում է վէպի հերոսներին: Օրինակներ.

Черномазый.

Սևահեր:

Красвыя выпуклыя губки.

Գեղեցիկ ուռած (!) շրթուքներ:

Схватилъ себѣ за волосы...
Ձեռքերով սոկում էր իւր մազերը:

Немножко широкое, но свѣжее лицо.

Իւր ախորժելի քնքո՛չ դէմքը:

Сѣрые глаза...

Թուխ աչքերը:

Загорѣлая рука...

Ալրած (արևառ) ձեռքը:

Բաւական չէ որ պ. Ղազարեանը ճիշտ չի թարգմանում գրածը, նա դեռ իրան թոյլ է տալիս տեղ-տեղ մի քանի բառ պակասեցնել, տեղ-տեղ էլ աւելացնել:

Հեղինակը ասում է, որ օրիորդի ձեռները գեղեցիկ էին, թարգմանիչը աւելո՞ղ է համարել լիշեւ դորա մասին: Հեղինակն ասում է, որ Զօլեան մի քիչ շիւ էր, թարգմանիչը ալնքան բարի է դռնում դէպի Զօլեան, որ ծածկում է նորա ալդ ֆիզիկական պակասութիւնը, Հեղինակն ասում է, «ինչպէս համարեա բոլոր ուս աղնականները, նազում էր շատ անպաշտ» և «նա համարեա բոլորովին անկախ էր», իսկ թարգմանիչը համարեա բառը երկու նախադասութիւնից էլ դէն է դցում:

Մի քանի տեղ թարգմանիչը իրանից աւելցնում է շտապով, իսկ ոչ ոք, կարծես և ալ բառերը, ուշք չը դարձնելով, որ ալդ բառերը զրաժի միտքը փոխում են, օրինակ.

Берсенева тоже прислушивался.

Նա ևս կարծես մի բանի ականջ էր դնում:

Մի տեղ թարգմանիչը իրանից աւելցրել է «տխուր դէմքի արտա-

խոտութեամբ» բառերը (№ 26, երես 385)։ Մի ուրիշ տեղ աւելցրել է «բոլորը սիրում և գգւում էին նրան» նախադասութիւնը (№ 27, երես 402) և ալլն։

Բոլորովին կամակական կերպով է վարում պ. Ղազարեանը և նախադասութիւնները իրար հետ կապող մասնիկների հետ, — և-ի տեղ է-յ է դնում, իսկ ի տեղ և, յետ-ի փոխանակ ալլն և ալլն։

Բայց պ. Ղազարեանը այնպիսի դարձածքներ էլ է գործածում, որոնք խորթ են բոլոր լեզուների համար, որ չի ասիլ ոչ մի ուսու, ոչ մի ֆրանսիացի, վերջապէս ոչ մի բուշմէն։

«... Մանր ալիքների» (Մոսկու գետի) հանդարտ շառաչիւնը փափաւում էր լսողութիւնը»։

«... Վախի, սարսափի ազատ զգացմունքներ» (ռուսերէնում դրած է ПОУ-СТРАХЪ)

Պր. Ղազարեանը քերականական կանոններ էլ չի ընդունում, մինչև անգամ այնպիսի կանոններ, որոնք ընդունւած են բոլոր լեզուներում։ Օրինակ.

«Նրա (տիկին Ստախովայի) գուտոր Ելենայի ծնունդը քաղքակց մօր (տիկին Ստախովայի) առողջութիւնը... մանաւանդ խիստ ցաւ պատճառեց նրան (տիկին Ստախովային) ամուսնի այն վարմունքը, որ Նիկոլայ Արտեմեւիչը (ամուսինը) խաբէութեամբ ընծակեց և ալլն»։

Իերենք մի կտոր էլ. որի մէջ երևում են պ. Ղազարեանի թարգմանութեան բոլոր պակասութիւնները իրանց ցաւալի փալով։

„Во всемъ ея существѣ, въ выражении лица, внимательномъ и немногo пугливомъ, въ ясномъ, но измѣнчивомъ взорѣ, въ улыбкѣ, какъ будто напряженномъ, въ голосѣ тихомъ и неровномъ, было что-то нервическое, электрическое, что-то порывистое и торопливое, словомъ, что-то такое, что не могло всѣмъ нравиться, что даже отталкивало иныхъ.“

Նրա բոլոր գոյութեան մէջ, — ուշիմ և երկչոտ դէմքի արտախոտութեան, պարզ և փոփոխական հալեացքի, լարւած ժպիտի, և հանդարտ ու անհաւասար ձայնի մէջ՝ կար մի տեսակ էլէքտրականութիւն, մի տեսակ շտապող ուժգնութիւն, մէկ խօսքով՝ այնպիսի մի առանձին բան, որ շատերին կարող էր գուր չը գալ, որից շատերը կարող էին խորչել մինչև անգամ (№ 27 եր. 400)։

Ինչ աւելացնեմ ասածներս... պէտք էր աւելի խնամքով ու հմտութեամբ թարգմանել Տուրգենևի «Навзвунтъ»-ն։